ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 133 – Ա 23 ապրիլի 2019 թ.

ՎԱԼԵՐԻԿ ՖՐՈՒՆԶԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգ»-ի 6.2-րդ կետը

կարգադրում եմ՝

1. 2019 թվականի ապրիլի 23-ից, մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նշանակված մրցույթի օրը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գանձակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Վալերիկ Ֆրունզի Մինասյանին՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության, կենսաբանական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լուսինե Վարդանյանին:

ՄԱՐԶՊԵՏ

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ